

**ՀՀ տարածքային կառավարման և զարգացման և գյուղատնտեսության  
նախարարներն այցելեցին Արագածոտնի մարզ՝ կարկտահարության պատճառած  
վնասներին տեղում ծանոթանալու նպատակով**

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոբյան և գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը հուլիսի 11-ին այցելեցին Արագածոտնի մարզ՝ հուլիսի 10-ին տեղացած կարկտահարության պատճառած վնասներին տեղում ծանոթանալու նպատակով:

Մարզպետ Գաբրիել Գյոզալյանի ուղեկցությամբ նախարարները եղան Կարբի, Օհանավան, Օշական, Ուշի համայնքներում, որտեղ կարկուտը մեծ վնասներ է հասցրել գյուղատնտեսական մշակաբույսերին, ցանքատարածություններին ու պտղատու այգիներին: Մեծ վնասներ են կրել Կարբիի և Օհանավանի խնձորի այգիները:

Ուժեղ քամու և կարկուտի պատճառով վնասվել են նաեւ շինություններ, բնակելի տների տանիքներ և համայնքային ենթակառուցվածքներ: Կարկուտից տուժել են շուրջ 190 հա խաղողի այգիները, փլուզվել են 15-20 տան տանիքներ: